Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՄԱՅԻՍ 1 1892 Թիւ 9

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 Թալէր կամ 10 Ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։



ԼԱԶԱՐԷՖ

ՌՈՒՍԱՀԱՅ ՄԵԾ ԶՕՐԱՎԱՐ

(Հրատարակութիւն «Հայք»ի)

Entered as second-class mail matter. at P.O.NewYork. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Ղազարէցի Ռուսահայ Մեծ Ջօրավարի. — Հայ յեղափոխականք. — Նամակ Կ. Պոլսէն. — Նամակ Կիլիկիայէն. — Ուղեւորութիւն իմ ի Կիլիկիա և ի Փոքր Ասիա. — «ՀԱՅՐ»—Պատմութիւն Ամերիկայի Հայ Գաղթականութեան. — Քաղաքական, Ազգային և զանազան լուրեր.

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՔ

(*Տես նախորդ թիւն «Հայկական յեղափոխութիւնք»*)

Ա.

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՅ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՀ

Ամէն անոնք որք անոյշ միջոցներուն անոյժ լինելը տեսնելով՝ բուռն միջոցներու պէտքն կը զգան՝ յեղափոխական են սկզբամբ, և այդպիսեաց թիւն օր ըստ օրէ կ'աճի ջանիւք թրքական կառավարութեան։

Կ'արժէ որ այդ կարեւոր կետ աւելի պարզեմք, այսինքն թէ, թէպէտ և այսօր յեղափոխական Հայեր չպիտի գտնուէին եթէ ուսում և կրթութիւն փոքր ի շատէ տարածուած չլինէր մեր ազգի մէջ, բուն կրթութիւնն չէ որ յեղափոխական կ'անէ Հայերն, այլ այն դիմադիր մարմինն, այն կառավարութիւնն, որ կրթեալներու խղճին և կրթութեան արդար պահանջմանց կը պատասխանէ ծայրայեղ խստութեամբք, և գառնաբարոյ անհատներն անգամ կը կատղեցունէ։

Կան ուրիշ կարգ մի յեղափոխականներ ևս մեր ազգի մէջ, զորս Բ. Դուռն ուղղակի գրգռած չէ։ Կը ակնարկեմք այն կարգ մի անկարգ երիտասարդներուն որք Եւրոպայի մէջ ուսած և ընկերվարական գաղափարներով գինովցած՝ կ'ատեն ամենայն իշխանութիւն, և իրենց այդ կիրքն օսմ. կառավարութեան վերայ յագեցունել կ'ուզեն։ Դոքա առաւել յեղափոխական են քան զյեղափոխականս և նուազ հայ քան զՀայս։

Այդ ծայրայեղներ տինամիթի սիրահար են և յանկարծ մարդ սպաննելու յօժար։ Նոցա համար նպատակն կ'արդարացունէ միջոցն, Սարսափեցունել կ'ուզեն, և սարսափեցնելով յաղթել դիմադրութեան։ Սարսափեցունել չհամազգին ու համազգին ալ։ Հայուն ալ կըրծոց վերայ դանակի ծայրն դնելով նորա քսակն բանալ փորձած են։ Նամակ տուած են ուրիշին ձեռքն, և մինչ նա կարդալու զբաղած է, պահուած դաշոյն մի յանկարծ փորն խոթած են — վա՛տ գործ, մինչև իսկ եթէ լինէր արդար։

Այդ ծայրայեղներ անկախութիւն կը պահանջեն, մինչ ճշմարիտ յեղափոխականք՝ միայն ինքնօրինութիւն կը պահանջեն, և այն՝ ընդ վեհապետութեամբ Սուլթանին. ուրեմն նոքա իրօք ապստամբ են, սոքա ճշմարիտ յեղափոխական։ Նոքա զՀայաստան «մրջիւնի բոյն» անել կ'երազեն, սոքա՝ մարդկային յառաջդիմութեան պայմաններն յարգող երկիր։ Նոքա կ'ուզեն որ ժողովուրդն ինքն իւր ձեռքի մէջ ունենայ կառավարութեան դեակն, այլով բանիւ՝ լինի սանձարձակ. սոքա կ'ուզեն որ ժողովուրդն կառավարուի ազգային կառավարութեամբ մի որոյ խստութիւն մեղմանայ այն չափով որով ժողովուրդն յառաջերթայ կրթութեան և պարտաճանաչութեան մէջ։

Ուրեմն այս երկու կարգ յեղափոխականք բոլորովին և ամենայնիւ իրարու աննման են և անհամաձայն՝ թէ՛ շարժառիթով, թէ՛ միջոցներով և թէ նպատակով։

Բ

ՃՇՄԱՐԻՏ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԱՑ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐՆ

Ճշմարիտ յեղափոխականք իրենց համազգեաց մէջ ունին երկու դաս հակառակորդներ։ — ծայրայեղներու կամ ապստամբներու դէմն յառաջոյ և խոհեմներու դասն ի թիկանց։

Ծայրայեղներն կը գահավիժին իրենց մոլար գնացից մէջ, և իրենց անբարոյական միջոցներով կը պղծեն այն մեծ գործ զոր «սուրբ» կը կոչեն. նոցա կը պարտիմք նաև Թուրք կառավարութեան վերջին անօրինակ խստութիւններն ըստ մասին։

Իսկ խոհեմներ կ'ասեն — միթէ յիմարութիւն չէ՞ յուսալ թէ Հայերն որ ցրուած են ու փոքրաթիւ, անզէն են ու անվարժ, և ոչ ալ դրսէն կռնակ ունին, երբէք պիտի կրնան զէնք վերցնել օսմ. հզօր պետութեան դէմ որոյ հետ այնքան նեղութեամբ զարնուեցաւ մեծապօրն Ռուսիա, և նորէն զարնուելու դրեթէ կը պատկառի։ Մի՞թէ, կը յաւելուն, մեծ անխոհեմութիւն չէ՞ այդ անզօր և անպաշտպան Հայերն կեղծ քաջալերու թեամբք գրգռել դիմադրական ցոյցերու, եղեռնաւոր արարքներու, որոց արդիւնքն կը լինի բոլոր Տաճկահայոց անողորմ խստութեանց ենթարկումն։ Ուրեմն ի բաց թողումք ամենայն յեղափոխական խորհուրդ։

Այսպիսեաց կը պատասխանեմք — կ'ընդունիմք ձեր դիտողութիւններն բայց կը հերքեմք ձեր եզրակացութիւն։ Այն յեղափոխութիւն զոր մեք կը գուշակեմք, շատ տարբեր է անկէ զոր դուք կը կարծէք։ Մեք արուեստական կերպով պատրաստուած յեղափոխութեան չեմք բաղձար, և ոչ ալ յոյս ունիմք օսմ. բանակին ու զօրութեան վերայ փայլուն յաղթանակներ տանող դիմադրութեանց։

Գ

ԵՐԲ ԵՒ ՈՐՊԻՍԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ

Այն յեղափոխութիւն որ գալոց է, պիտի գայ ինքնին, դէպքերու տրամաբանական ընթացքին հետեւութեամբ։ Հայաստանի ժողովուրդն կը զգայ, և հետզհետէ աւելի պիտի զգայ թէ իւր արտաքին կացութեան և ներքին բարոյական վիճակի միջև ապաղակող անհերդաշնակութիւն կայ — թէ հարկ է կառավարութեան ոգւոյն մէջ էական փոփոխութիւն մուծանել և Հայաստանի վարչութիւնն հաշտեցունել հայկական յառաջդիմութեան պայմանաց հետ։ Մշակեալ և խոհուն Հայեր, և անոնցմէ ներշնչեալ զգայուն և արթուն Հայեր, Հայեր որք արդարութեան ծարաւի, պատուոյ նախանձաւոր, յառաջդիմութեան ըղձացող, ազատութեան սիրահար են զանազան աստիճաններով, ուշ կամ կանուխ պիտի հասնին զգացմանց այն փառաւոր վիճակին յորում յօժար պիտի լինին իրենց կեանք տալու այն բարեկարգութեանց համար առանց որոց կեանքն անտանելի պիտի թուի իրենց։ Երբ ժողովուրդն այդ սիրալի զգացմամբք գինովցած է, յեղափոխութիւնն առթի միայն կը սպասէ պայթելու համար. և առիթն, ինքնապաշտպանութեան առիթն, չպիտի պակսի Հայոց համար։

Աշխարհի պատմութիւնն և Հայոց պատմութիւնն կ'առաջնորդեն զմեզ հաւատալու թէ այդ օր պիտի գայ Հայոց համար եթէ Սուլթանն կամ պետութիւնք չփութան արդարութիւն անել այն ժողովրդեան որոյ յանցանք սեպուած է իւր խաղաղասիրութիւն և իւր համբերութիւն։

Թող լաւ գիտնան Սուլթանն և պետութիւնք, նաեւ մեր ալ երկչոտ խոհեմներն, թէ երբ Հայեր սուրբ յուսահատութեան և զայրութի այն դիւցազնական վիճակի հասնին, չպիտի հաշուեն թէ որքան բազուկ, որ-

քան հրացան ունին թրքական բանակի և թնդանոթներու դէմ, կամ թէ ո՛վ կայ օտար պետութիւններէն համակիր։ Նոքա պիտի դիմադրեն, պիտի մարտնչին քարով, բրով, կացինով և դանակով. պիտի պատերազմին ոչ յաղթելու յուսով այլ յուսահատութեամբ։

Նոքա պիտի ուզեն մեռնի՛լ, և Հայաստան պիտի ապրի։

Նոքա պիտի յաղթուին, և Հայկական Դատն պիտի յաղթանակէ։

Նոյն ինքն Սուլթանն իւր բարկութեան մէջ պիտի ասէ— Հայք ալ մարդ են եղեր. նոքա արժանի են ինքնավար լինելու, նոքա կարող են սահմանապահ քաջ նահանգ մի լինելու։ Կրնա՞յ մարդ թագաւոր լինիլ և դիւցազնութիւնն չսիրել։

Պե՛տութիւնք ալ պիտի միջամտեն ոչ վասն զի Հայեր յաղթած պիտի լինին, այլ ապացուցած թէ արժանի են յաղթելու, արժանի ապրելու, արժանի ազատութեան։

Ահա, Հայե՛ր, ահա այն մասնաւոր, այն հայկական վեհ յեղափոխութիւն որում հայրենակէրք կը սպասեն և զոր Բ. Դուռն փութով կը պատրաստէ։

Ուրեմն,

ԽՈՀԵՄՆԵՐՈՒՆ կ'ըսեմք — Խոհե՛մ Հայեր, դուք ձեր խորին խոհեմութեամբ կ'ուզէք որ հայրենիքն թագ ունենայ բայց խաչ չկրէ նախ։

Դուք կը փափաքիք որ Հայաստան վերածնի, բայց առանց ցաւ քաշելու։

Դուք ղձեղ խոհեմ կարծեցէք, մեք զձեղ բնութեան օրինաց անհնազանդ կը հռչակեմք, և կը մաղթեմք որ չուտով բժշկուիք ձեր ախտաւոր խոհեմութենէ։

ԾԱՑՐԱՑԵՂՆԵՐՈՒՆ կ'ըսեմք — Դուք, ծայրայեղներ, ընկերվարականներ, անիշխանականներ, ի՛նչ ալ որ կոչէք դուք զձեզ, մեք զձեզ ապստամբներ և անխոհեմներ կը հռչակեմք։

Դուք չափազանց յեղափոխական էք և հազիւ բաւական հայ։

Դուք կը վարժէք Հայերն կարիճ լինելու և խայթելու. մեք կը բաղձամք տեսնել զայնս կարիճ որ մռնչէ և պատռէ իրեւ առիւծ։

ՃՇՄԱՐԻՏ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒՆ կ'ըսեմք — Դուք ևս, ե՛ղբարք, երկու մեծ թերութիւն ունիք—նախ չէք զգար թէ ձեր բեռն որքան ծանր է, երկրորդ, չգիտէք թէ ո՛րքան մեծ բաներ ընելու կարող էք միութեամբ։

Փոքրերդ կը հարցնէք— ի՞նչ լուր կայ, փոխանակ հարցնելու — ի՞նչ ընել պէտք է, ի՞նչ կրնամ ընել ես։

Մեծերդ չափազանց կարեւորութիւն կուտաք ձեր առաջնութեան կամ ձեր կուսակցութեան։ Արբանեակ կը փնտռէք մանաւանդ քան ընկեր։ Երանի՜ թէ չուտով հասնէիք այն վիճակին յորում պիտի զգաք թէ առանց իրարու ոչ ինչ կարէք ընել մեծ։

Դ

ՈՐԲԱՆ ԲԱՆ ԿԱՑ ԸՆԵԼՈՒ

Սոսկալի քանակութեամբ գործ կայ ընելու։

Պէտք է որ Հայ պաշտօնական մարմին մի Բ. Դրան բացատրէ Հայոց ճշմարիտ բաղձանքն և ձգտումն։ Եթէ այսու չյաջողի զԲ. Դուռն բերել յուղիղ ըմբռնումն իւր շահուց և իգիտակցութիւն իւր պարտուց, գտնէ յեղափոխութեան պատասխանատուութիւնն նորա վերայ կը թողու։

Պէտք է Տաճկահայոց զգացմանց հոսանքին տալ լաւագոյն ուղղութիւն; Պէտք է պատուոյ և իրաւանց զգացումներն գօրացունել ի նոսա և միանգամայն յորդորել որ համբերեն, զի կրթեալ և զգայուն մարդոց բարկութիւնն այնքան աւելի ահաւոր կը լինի որքան աւելի համբերած լինին։ Պէտք է նաև նոցա ազատական խորհուրդներն լուսաւորել, զի գիտեմք թէ երբեմն այնպիսի ցոյցեր կ'ընեն որք պարգապէս յանցաւոր կը կացուցանեն զնոսա առաջի օրինաց։

Այս և այսպիսի գործեր կատարելու համար պէտք է ունենալ իմաստուն եղանակ, յարմար միջոցներ, գոր ծարանկեր ու գործիներ. Շատ զարմանալի կը թուի մեզ որ տակաւին ոմանք կանոնաւոր և մեծ կազմակերպութեան մի անհրաժեշտութիւնն չեն հասկացած։ Ո՛վ որ հաճի գործոյն բարդութիւնն և անհնարին ծաւրութիւնն լուրջ մտածութեան նիւթ ընել, պիտի համոզուի թէ մեծ կեդրոն մի անհրաժեշտ է գործոյն յաջողութեան համար, կեդրոն մի որոյ պաշտօն լինի—

(1) Իւր բարձր հեղինակութեամբ ըստ կարելւոյն չէզոքացունել ծայրայեղ յեղափոխականաց վնասակար ազդեցութիւնն։

(2) Իւր անդամոց միացեալ արժանապատուութեամբ վստահութիւն և համակրութիւն ներշնչել ծայրայեղ խոհեմներուն, անտարբեր հարուստներուն և թերահաւատ ուսեալներուն։

(3) Բ. Դրան հետ դիւանագիտական յարաբերութիւն ընել։

(4) Եւրոպեան դահլիճներուն ուշադրութիւնն ըղբաղեցունել 61դ յօդուածով։

(5) Եթէ դիւանագիտական միջոցներով չյաջողի յեղափոխութեան առջեւն առնուլ, մատուցանել յեղափոխութեան մղուող յուսահատ Հայաստանին գաղթական Հայ Աշխարհի համակրութեան ամենակերպ ապացոյցներն։

Ե

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Այսպիսի գործեր կատարելու կարող եղող կեդրոն մի ստեղծել հնարաւոր է և գործնական է, եթէ կամք ունենամք։

Ո՛վ որ կ'ըսէ թէ այդպիսի կեդրոն մի հարկաւոր չէ, նա գործոյն մեծութիւնն ըմբռնած չէ։

Ո՛վ որ կ'ըսէ թէ այնպիսի կեդրոն կազմել կարելի չէ, նա թերահաւատ մ'է, նա չնդունիր թէ Հայաստան կրնայ ապագայ ունենալ. վասն զի եթէ Գաղթական Հայ Աշխարհն այնքան շնորքով մարդերովն և այնքան ազատութեամբն չէ՛ կարող կեդրոն մի կազմել, ուրեմն հայութիւնն բարոյապէս չքացած է։

Ո՛չ, հայութիւնն չէ չքացած, ե՛ղբարք։ Կարող եմք մեք կեդրոն մի յօրինել. կարող եմք մեծամեծ գործել։

Ցօժարեցէք, մեծե՛ր, կա՛մք ըրէք, փոքո՛ւնք, և կարող պիտի լինիք ամենայնի։

L'ARMENIE-ARMENIA

Անգլիերէն և Ֆրանսերէն ամսաթերթ երկլեզուեան

Տարեկան բաժնեգինն է 2 թալէռ և կէս կամ 12 ֆր. և կէս

Խմբագիր M. TCHE'RAZ

33 DE VERE GARDENS, LONDON, W.

ENGLAND

ՎՐԻՊԱԿ

Նախորդ թիւին 61դ երեսին առաջին էջին մէջ, Վարդան Մամիկոնեանի ատենախօսութեան 24 տողին «ցուց անել» բառն պէտք է կարդալ «ցածուցանել»։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Մեծ. խմբագիր,

Ձեր պատուական «Հայք»ի մէկ քանի թիւերը կարդալու բաղդաւորութիւնը ունեցայ այս օրերս, և հըպարտութեամբ ողջունեցի Ձեր թերթը իբրև հայ մտաւորական կեանքի փառաւոր մէկ նշանը։ Նախանձեցայ Գաղթականութեանց վրայ որ ազատ են գրելու, խօսելու և կարդալու. մտածեցի անսահման ցաւով թէ ինչե՞ր պիտի գրէինք ու խօսէինք մենք ալ եթէ մայրաքաղաքիս մէջ հայ մամուլը ու հայ լեզուն կապուած կաշկանդուած չըլլային։

Թոյլ տուէք ինձ, աղնիւ խմբագիր; որ այս անդրանիկ նամակովս ի վեր հանեմ մտքիս խորքէն պահուած խորհուրդ մը, յորում թերեւս ձեր իմաստուն ընթերցողներն մարգարիտ մը գտնեն։ Թոյլ տուէք որ Փոքր Ասիոյ մէկ քաղաքին մէջ պատահած մէկ քանի դէպքեր պատմեմ, առանց տեղւոյ և անձանձ անուններն հրատարակելու (զատ թղթի մը վրայ պիտի գտնէք ատոնք ալ)։ Այսպէս ընելու հաւատացէք արդար պատճառ ունիմ։

Այդ քաղաքը կոչենք Եփրատ, և այն հարուստ Հայն ալ որուն վրայ պիտի խօսիմ, անուանենք Թաթոս Աղայ։ Եփրատայ Թրքերուն մէջ նշանաւոր դէշ մը կայ, որուն որդին իրեն պէս դէշ, ղուրան ելլելով զինուորական ծառայութեան կոչուեցաւ։ Հայրը դիմեց Թաթոս Աղային, և 50 լիրա պահանջեց որպէս զի այդ գումարով իր սիրելի որդին զերծ կացուցանէ զինուորական ծառայութենէ։ Թաթոս Աղայն բնականօրէն յօժար չերեւեցաւ այդպիսի մե՛ծ բարերարութիւն մը ընելու։ Թուրքն ոպառնացաւ, որովհետև վաղածանօթ էր իր շահատակութիւններով, վախ ձգեց Թաթոս Աղային սիրտը, և սա 50 օսկի դրաւ Թրքին ափը։ Այսպէս մեր հարուստները կը կողոպտուին քաղքի մէջ, ցերեկ ատեն, իրենց տունը կամ խանութը նստած տեղերնին։

Աւելի զուարճալին կայ։ Զինուորական ծառայութենէն զերծ կացուցուած այդ պատուական զոյգ մը ձեռքերը ամեն չարութիւն խայտառակութիւն կը գործեն Եփրատայ մէջ, և երբեմն պահուիլ հարկ կ'ըլլայ ժանտագործին։ Ո՞ւր պահուի նէ աղէկ է։ Կ'երթայ Թաթոս Աղային տունը կը պահուի. նա է զինքը բանակի ծառայութենէ ազատած, նա պէտք է որ իր տան մէջ տպաստանարան տայ իր ազատեալին, կերակրէ զայն, մինչև որ գաղանը իր որջէն դուրս ելլելու ժամը հասած կարծէ։ Չկարծէք թէ Թաթոս Աղայն ասոնց բանէն կ'ախորժի. հաւատացէք թէ 50 լիրան տալէն աւելի ծանր կուգայ իրեն, բայց վախէն կը հաւանի։ Տեսէք ինչ բաներ կսլ տալու ստիպուած են մեր հարուստները։

Հիմա նոյն քաղաքին մէջ պատահած ուրիշ դէպք մը ալ պատմեմ։ Կարնոյ յուզմունքներէն ետև էր որ պատահեցաւ ասոնց դէպքը. այն ատեն ամեն տեղ ալ Հայերը քիչ կամ շատ գրգռուած էին։ Եփրատցի հայ երիտասարդ մի մերժեց կառավարութեան տուրք վճարել, չունիմ, չեմ տար ըսաւ։ Տուրքն չափազանց ծանր է, կամ սխալ հաշիւ կայ չէր ըսեր, այլ պարզապէս կը մերժէր վճարել։ Հարկահաւաք պաշտօնեայն պարապ ճամբել բաւական չսեպելով, լաւ ծեծ մը քաշեց, յորում 10—12 բազուկներ ալ իրեն օգնեցին։ Այժմ այս տողերը կարդացող շատ մը Հայ երիտասարդներ պիտի ըսեն — աղէկ ըրեր են, կեցցե՛ն քաջերը։ Սպասեցէք, ընթերցողներ, և լսեցէք թէ այդ քաջերը ինչ ըրին վերջը։ Տուրք տալէ հրաժարող քաջը բանտարկուեցաւ, և անոր ընկերները··· պիտի կարծէք թէ գնացին կառավարութեան բողոքեցին, կամ բանտէն գիշերը բռնի հանելով ազատեցին իրենց ընկերը։ Ո՛չ։ Թաթոս Աղային լուր իրկեցին որ բանտարկեալը ազատելու ճարը նայի, եթէ ոչ իրեն գլխուն այսպէս ու այնպէս բաներ կը բերեն։ Թաթոս Աղան ալ վախէն գործածեց այն միջոցը որ կարող էր գործածել— ինքը քսակը դրպանէն հանեց և կառավարութիւնն ալ երիտասարդը բանտէն։

Այժմ եկուր, ընթերցող, վիճինք քեզի հետ։ Ես կ'ընդունիմ թէ այս երիտասարդներուն ըրածին մէջ քաջութեան տարր մը կայ, կառավարութեան անվերջ հարստահարութեանց դէմ իրենց երկար տարիներու ցաւը քիչ մը դուրս տալու քաջութիւնը ունեցած են. բայց դուրս տալու շատ տղայական կերպ մը և անյարմար առիթ մը ընտրած են։ Սովորական, օրինական տուրքը կառավարութեան վճարելէ հրաժարիլը արդէն ինքնին շատ ջատագովութիւն չվերցներ. իսկ ոստիկանն ալ ծեծել և այնպէս վռնտել ամենեւին գովելի չէ։ Պաշտօնեայն յանցաւոր չէ օրինաւոր թուղթ ներկայացնելով տուրք ուզելուն համար. զնա ծեծել՝ իւր ուրիշ արդար գանգատները ոտքի տակ տալ է։ Եւ ի՞նչ ճար խորհեցան երբ իրենց ընկերը բանտարկուեցաւ. Թաթոս Աղայի, այսինքն Հայու մը օգնութիւն բռնեցին որ զայն հանէ բանտէն; և սա կաշառ տալով հանեց զայն. Ես ուրիշ բան ըսել չէ բայց միայն իրենց անխոհեմ կամ անօրինական դիմադրութեան տուգանքը Հայու մը վճարել տալ։ Հայ հարուստն ալ այդպէս Թրքին ու Հայուն տուգանքները վճարելով կը փճանայ, և հայ հասարակութիւնը կը տկարանայ։ Այդ երիտասարդներուն ըրածը Հայուն միայն բերաւ ուրեմն, ոչ թէ Թրքին, և որ աւելի չարն է, իրենք նախ թուրք պաշտօնեայ մը հարստահարած եղան տղայական գրգռմամբ և ապա պատժէն ազատելու համար ալ հարուստ հայ մի հարստահարեցին, այսինքն, վերջին հաշուով, այնպիսի անխելք կերպով իրենք զիրենք պաշտպանել ելան որով իրենք զիրենք հարստահարած եղան։

Եթէ մեր երիտասարդները քաջութեամբ երբէք արտայայտել ուզեն իրենց արդար ցասումը, պէտք է որ տեղը, ժամանակը և մանաւանդ առիթը մեծ խոհեմութեամբ ընտրեն։ Ամենալաւ առիթները չեն պակսիր։ Օրինակի աղագաւ, երբ Մուսա Պէյ անպարտ վճռուեցաւ, կ'արժէր որ քաջ երիտասարդներ մահը աչք առած սպաննէին զայն. բոլոր աշխարհ «քաջ» պիտի կոչէր զիրենք, հանրային կարծիքին մէջ դիւցազն պիտի համարուէին դոքա։ Հայկական գաւառաց մէջ ուրիշ Մուսա պէկեր, և անկէ վար չմնացող կառավարիչներ կան, կամ վաղածանօթ սրիկաներ որ իրենց երկարամեայ չարագործութեամբք նշանաւոր եղած են, ահա այդպիսիներու մէկ նոր անգգամութեան առթիւ պէտք է ոտքի ելնել, արդարութիւն պահանջել, կամ արդարութիւնը ձեռքովն ի գործ դնել։ Եւ երբ ուժով ու բռնութեամբ սկսին գործը, պէտք է նաև բռնութեամբ շարունակեն ու մեծցունեն, ոչ թէ ծեծով սկսին ու կաշառքով պզտիկցունեն և վերջացնեն գործը։

Ցեղափոխականին ներքին կրակը արդարութեան և իրաւանց սէրը պէտք է ըլլայ։ Եթէ սէր գործ ընեն յեղափոխականք ուր անիրաւութիւն, վատութիւն տեսնուի, անմիջապէս հանրային կարծիքն իրենց դէմ կ'ելլէ, և իրենց ուժը կը խորտակի։

Վերջապէս շատ կարեւոր է նաև որ մեր հարուստներուն հետ մեր երիտասարդները աւելի աղէկ վարուիլ գիտնան։ Ուսումնական երիտասարդներէն արհամարուած և կոչտ երիտասարդներէն բռնաբարուած հարուստը կը պպղի իր ժողովրդէն. Մենք մեծ պէտք ունինք մեր հարուստ դասակարգին ձեռնտուութեան, և նոքա ալ մեր ուժին մեծ պէտք ունին. ուրեմն քաջերը, ուսումնականները և հարուստները պէտք է իրար բռնեն, իրար սիրեն, և համերաշխ դործեն ազգային փրկութեան մեծ գործը։

Կ. Պոլիս, 10 Ապրիլ 1892 ԽԻԿԱՐ

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

Մուհապէթճի Տէր Ղեւոնդը, անոր եղբայրը և օր. Եղիսաբէթը Աստանայի մէջ բռնելով Հալէպ տարած էին։ Դատաւորն անոնք խստիւ հարցաքններ է. Տէր Ղեւոնդ ալ Ս. գիրքը բանալով և սիրոյ վրայ հատուած մը կարդալով ըսեր է թէ իմ գործս ահա այս է, սէր քարոզել։ Շատ մը վկաներ ալ հաստատած են թէ անոր գործը Ս. Աւետարան քարոզել է։ Բայց դատաւորը կը հրամայէ որ բանտը դնեն։

Զէյթունէն և Մարաշէն Հալէպ կանչուած հարուստները նորէն իրենց տեղերը վերադարձած են։ Սոքա Զէյթունցւոց դէպքին նկատմամբ հարցաքննուելու համար կոչուած էին։ Դատաւորը հարցած է թէ դուք ապստամբներուն վառօդ, կապար, կերակուր և ոտակ հայթայթած չէ՞ք. պատասխան տուերեն թէ ոչ, հայ. թայթաց չեն։ Կը կարծուի թէ ոսկիներու հնչիւնն ալ դոցա անմեղ ձայնին խառնուած լինելով արդարացած են և արձակուած։

Առաջնորդ սրբազանը դեռ բանտն է։ Վրթանէս անունով մին մեռած է բանտին մէջ։

Սեբաստիայէն լուր եկաւ թէ հոն ալ օրերս շատ յուզմունք կայ։ Կառավարիչը շատ խուզարկութիւններ ընելու ձեռնարկած է և բազում լրտեսներ կաշխատցունէ։ Տան մը մէջ իրր թէ յեղափոխական ոգւով գրուած ոտանաւոր մը գտնուած է, զոր չորս կամ հինգ տարի առաջ դպրոցական աշակերտ մը գրած է եղեր, և թէպէտ գրողն մեռած է արդէն, անոր մայրը ձերբակալեր են։ Հայեր շատ նեղութեան մէջ են։

Կիլիկիա ... 23 Մարտ, 1892 Ա. Ա.

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՄ

Ի ԿԻԼԻԿԻԱ ԵՒ Ի ՓՈՔՐ ԱՍԻԱ

Կուգամ համառօտիւ պատմել ընթերցողաց, օգնութեամբ յիշատերիս, իմ ուղեւորութիւնս որոյ չուկետն էր Այնթապ և հասկեան Կ. Պոլիս, անցնելով ընդ Մարաշ, Զէյթուն, Կիւրին, Սեբաստիա, Թոքաթ, Ամասիա, Մարզուան և Թրապիզոն։ Հարստահարութեանց դէպքերն զորս պիտի յիշեմ, տեսարանաց բուն տեղերն, ականատես վկայից բերնէն քննելով առած և արձանագրած եմ, և կուտամ զայնս իրրև բացարձակապէս ըստոյգ։

1886 Յունիս 28ին մեկնեցայ Այնթապէն։ Այնթապէն և ուրիշ կիլիկեան քաղաքներէ կային առաւել քան 50 հոգի ի կարաւանին։ Աւելորդ է ասել թէ երկաթուղեաւ կամ կառօք չճամբորդեցինք, այլ ձիու կամ ջորւոյ հեծած, և մեր ջորեպաններ էին թուրք, միայն թէ իրենց դէշութեամբ քիչ մ'աւելի համբաւեալ քան Տաճկաստանի դէշ ջորեպաններն, որպէս տեղեկացուցին բընիկք գաւառին։ Յիրաւի իրենց բռնաւորութեան փորձն տուին մեզ գաղանամիտ ջորեպանքն նոյն երեկոյին, ուզելով մեզ տալ անցունել գիշերն դաշտի մի մէջ ուր լաւ արօտ կար իրենց յարգելի ջորիներուն համար, իսկ մեզ կեավուրներուս համար խմելու ջուր չկար բաց ի դենդաբեր և ճախճախուտ առուէ մի, որ հիւանդ սողունի մի դանդաղ ընթացքն ունէր։ Կարաւանին առաջին ջորին բռնած՝ բեռն վար առնուլ կ'ուզէր երիտասարդ ջորեպան մի, որուն կ'ընդդիմանայր մեր ուղեկիցներէ ոմըն. ջորեպանն ձեռքով կռուելու համար բարձրացուց բազուկն զոր տեսնելով ես արշաւեցի յառաջ, և խարազանի կատաղի հարուածներով ժպիրհ ջորեպանին թիկունքն զգաստացուցի։ Հասան միւս ջորեպանք, մօ. ռուօք և անմօրուս, վարազապար պոռալով, որոց ես ինքնս յանդիմանութիւններ գոռացի, և կը խնդրէի պարան որով կապէի զիրենք մինչև Մարաշ տանելու համար։ Ուղեկիցներէս ոմանք իմաց տուին նոցա թէ ես տարբեր էի սովորական կեավուրներէ, և ուստի Թրքերն իսկոյն տեղի տալով՝ յառաջ գնացին մինչև հասանք վայր մի ուր առուն և անառուն կրնային գիշերել հանգիստ։ Այդ դէպքէն յետոյ ջորեպանք փաղաքչեցին զմեզ մինչև Մարաշ։

ՄԱՐԱՇ

Մարաշ մեծ ուղիներու գծէն դուրս մնացած դժբաղդ քաղաք մ'է աղքատիկ, և պիտի ըսէի յամենայնի յետնեալ, եթէ չյիշէի թէ Մարաշցիք լաւ համեստ կը չինեն (և եթէ ամե՛ն էշ համեստ կրէր, Մարաշցիք հարուստ կը լինէին) ինչպէս նաև լաւ աթոռներ ու լաւ մաշլախ։ Փողոցներուն մէջ գտանք փոշւոյ անհաւատալի առատութիւն, և կը զարմանայինք թէ որպէս կրնան մարդիկ աչօք բացօք չրջիլ հոն մանաւանդ երբ հով լինի։ Փուչէն յետոյ առատագոյն բանն որ տեսանք՝ էր աչքի ցաւ, բայց ատոր վերայ չզարմացանք։

Մարաշի Հայերն հայերէն կը խօսին, թէև բաւական աղաւաղ հայերէն մի։ Տանն, ուր հիւր եղայ ես, տիկինն հայերէն կը խօսէր իւր դստերց հետ, իսկ ինձ հետ տաճկերէն, կարծելով թէ չպիտի հասկանայի ես իւր հայերէնն։ Այդ դստերց մին էր տասն և երկու տարեկան հազիւ, բայց նշանուած էր արդէն, և քիչ ատենէն ալ թերևս պիտի ամուսնանայր, կամ պիտի ամուսնացնէին։ Արդարև այդ քաղաքի մէջ ծնողք իրենց զաւակաց օրիորդութիւնն կը սպաննեն. 12—13 տարեկան աղջկունք ընդհանրապէս կ'ամուսնացուենն, որոյ հետեւութեամբ անդ մանուկներ և կիներ միայն կան, իսկ օրիորդ լինելու բաղդին այն դժբաղդներն միայն կ'արժանանան որք միաչէն կամ կաղ են։ Օրիորդաց վարժարանին տարեկան հանդիսին ներկայ գտնուեցայ և բուռն ատենախօսութեամբ մի հարուածեցի աղջիկներն վաղահաս ամուսնացնելու սովորութիւնն, ցուցնելով թէ այդ սովորութիւն անհաշտելի է դաստիարակութեան և առողջաբանութեան պահանջմանց։

Ճանաչեցինք, ի մէջ այլոց, Հ. Ղեւոնդ քահանայն որ ձերբակալուած է վերջերս և տարուած է ի Բերիա։ Հ. Ղեւոնդի և երկու Զէյթունցի քաջերու պատկերն պիտի հրատարա-կեմք «Հայք»ի դալ թուով։

Երիտասարդաց մեծ բազմութեան մի ատենախօսեցի անդ «Զօրութեան» վերայ։

ԶԷՅԹՈՒՆ

Մարաշէն մեկնեցայ երեք ընկերներով միայն, և Զէյթունցի ջորեպանով։ Մարաշէն մինչև քաջաց քաղաքն, և անտի մինչեւ Էսէն–Տէրէ երկիրն յոյժ լեռնային է։ Ցաճախ տեսարանն վսեմ է — բլուրներ, խորախոր ձորեր, ժայռեր, լեռներ անօրինակ խտութեամբ իրարու կը յաջորդեն։ Կը թուէր ինձ տեսնել կռուասէր, անհանդարտ, արկածալիր երկիր մի, ուր բլուրք և լերինք անմահական և ահաւոր հսկայից նման կեցած էին կուռ վառեալ։ Այդ տեսարան մարդուն արիական ըզգացումներ կը ներշնչէ։ Զէյթունի շատ մօտ՝ ճամբան սոսկալի կերպիւ կը նեղնայ, բլրոյն մէջքէն կանցնի իրրեւ այծուղի, ուր եթէ ճամբորդին ոտքն սահի, կուլ կը տրուի անդնդախոր ձորէն որ բերանաբաց կը սպասէ։ Մեր քաջ ջորեպանն մասնակցած էր պատերազմաց, և ցուցուց մեզ ճակատամարտի պատմական վայրերն՝ պատմելով հին ու նոր շահատակութիւններ։

Քաջաց քաղաքին դիմաց, բլրոյն վերայ տեսանք թրքական զօրանոցն և թնդանօթներն ուղեալ դէպ ի Զէյթուն։ Զօրքն շատ զգուշութեամբ կը վարուին Զէյթունցւոց հետ. և ցերեկ ատեն փողոցներուն մէջ կ'ակնածեն հայ տղոցմէ, որք սովոր են զինուորներուն քար նետելու։ Իսկ ժամ 12ին, ըստ Թրքաց, փողն կը հնչէ և բոլոր զօրքն ստիպուած են ի զօրանոց դառնալ զի Զէյթունցիք այդ ժամէն յետոյ եթէ զինուոր տեսնեն՝ կը

կարծեն թէ զինուորին կռնակն կը կեռայ, և ՝ը փուԹան դարմանել...։

Զէյթուն բլրոյն զառ. ի Թափին վերայ շինուած է տուներն փոքր և խիտ առ խիտ, փողոցներն քարուտ և անկանոն, ջուրն առատ և մաքուր։ Ջերմուկներ ևս կան քաղաքին մօտն։

Զէյթունցին ջլուտ և բարձրահասակ է։ Միայն մէկ հոգի տեսայ գէր և յոյր։ Ահագին ուժ ունին այդ սրատոտ Հայեր, և են արագաշարժ։ Բարձրաձայն են, գըրեթէ պառոտախօս իբրև զԲուրդս։ Իրենց հայերէնն գրաբար տարբ շատ կը պարունակէ, բայց անվարժ ականջաց դիւրըմբռնելի չէ արտասանութիւնն։ Մեք կըրնայինք սակայն գրեթէ լիովին հասկանալ երկրորդել տալով խօսքն։ Ա տառն Ո կը հնչեն յաճախ. կ'ասեն Խազոր (Խազար) Անգոն (անագան) ևն.։

Զէյթունի մէջ կան սակաւաթիւ Թուրք ընտանիք, որք սակայն գլխովին հլու են Հայոց և կը խօսին հայերէն։

Անպատուամ հաճոյքով կը դիտէի Հայ տղայքն հրացան կռնակն նետած։ 10—12 տարեկան տղայք զէնք կրել, և հրացան լնուլ ու պարպել գիտեն անդ։ Հրացանն Զէյթունցիին առաջին պէտքն է։ Նա ունի հրացան մինչեւ անգամ երբ ուրիշ ոչինչ ունի։ Նշան առնլու մէջ սքանչելի ատիճան վարպետ են նոքա։

Զէյթունցիք պատուական խաղող կը մշակեն յորմէ դերազանց գինի կը շինուի։ Շատերն ջրելպանութիւն կ'ընեն, ուստի և վերջին տարիներս երբեմն երբեմն տարապարհակ կը վարէ զնոսա Թուրք կառավարութիւնն. Մեր այցելութենէն մի քանի օր առաջ Թուրք զինուորներն տխուր փորձ մ'առած էին մեր քաջերէն։ Մի քանի Զէյթունցիներ կը բռնեն որ ջորիներով հանդերձ ծառայեն։ Մերայինք ստիպուած ճամբայ կ'ելնեն, և երբ կը հասնին յարմար վայր մի, կը նետուին ապառաժներու ետև և կը հրամայեն զինուորներուն որ ջորիներուն բեռներն Թափեն իսկոյն և դուրս ելնեն ճամբէն։ Զինուորներն կը կատարեն քաջաց հրամանն՝ հրացանաց խօսիլ չտալով, և Զէյթունցիք իրենց ջորիներ առած կը վերադառնան ի քաղաք։

Զէյթունցւոց մէկ մասն ոսվոր է ամառն ելնել լեռներն հօտերով և նախիրով, և բնակիլ վրանի տակ։ Յուլիս 7ին մեկնելով քաջաց քաղաքէն, մեր ճամբուն վերայ տեսանք վրանաբնակ Զէյթունցի ընտանիքներ և արջառ։ (Մնացածն յաջորդ Թուով)

ՀԱՅՐ

«Հայր»ի բաժանորդաց մեծ մասն բաժանորդ եղած են ուԹ կամ տասն հայրենակցաց ջանիւքն որք մօտաւոր կամ հեռաւոր դաղթականութեանց մէջ գըտնուելով՝ինքնայօժար աջ օգնութեան կարկառած են մեզ։

Միթէ այդ ուԹ կամ տասն անձանց նման ուրիշ տասն կամ քսան հայրենակիցներ ևս չկա՞ն որք «Հայր»ի օգտակար դերին համոզուած լինելով մեզ աջակցին։ Դոքա կրնան մեր Թերթի բաժանորդաց Թիւն շուտով երկպատկել եԹէ կամք ընեն։

«Հայր»ի նպատակն է հայրենհայ փրկութեան լաւագոյն եղանակն և միջոցներն քննել և զօրութիւններն կազմակերպութեան բերել։ Թերթին ընդարձակագոյն շրջաբերումն հարկաւոր է առ այս նպատակ, և մեք կը համարձակիմք յուսալ Թէ մեր ցայտվայր աշխատութիւնն բաւական յայտնած լինելով Թերթին հանգամանքն, ժամանակն եկած է որ եռանդուն և լուրջ աջակիցներու շնորհիւ ամեն կողմ և ամենուն ծանօԹ և համակրելի լինի այն։

«Հայր» կարօտ է ձեր աջակցութեան, ո՞ հայրենասէրներ։

Այս խնդիր կուզղեմք այն մշակեալ և անկեղծ հայրենասէրներուն որոց անուններն մեզ անծանօԹ են, բայց կը հաւատամք Թէ այնպիսիք կան ամեն դաղթականութեան մէջ, և քիչ դրէս շատ իմանալ կարող են։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. Տես Թիւ 4, 5, 6 և 7)

5

ԳՈՐԾԱՒՈՐՔ

Կարելի է ասել Թէ Ամերիկայի Հայ դաղթականութեան 100ին 97 և կէսն գործաւոր են։ Գործանոցատերաց, անկախ արհեստաւորաց, վաճառականաց ու այլ և այլ պաշտօնէից վերայ յառաջ բերուածներէն կը տեսնեն ընԹերցողք Թէ որպիսի փոքրամասնութիւն կը կազմեն այդ ամէնն միասին առած։ Երկրագործաց դասուն վերայ գրել զանց ըրած ենք միայն ի չգոյէ ստոյգ տեղեկութեանց. բայց սոքա ալ բազմաԹիւ չեն։

Հայ գործաւորաց Թիւն ի Միացեալ Նահանգս 4000ի մօտ կը հաշուի։ Կրնանք ասոնք երկու անհաւասար դասուց բաժնել — առաջին և փոքրիկ դասն այն է որ Թէեւ ուրիշի գործին մէջ Թոչակաւ կ'աշխատի, բայց լոկ ֆիզիքական ուժի դործ չկատարեր, այլ դժուարին, փափուկ ճիւղի մի գործաւորն է՝ գրեթէ մասնագիտութեան ատիճանին հասած։ Այսպիսիք ձեռքի հետ ուղեղ ևս կը յոդնեցունեն, և ուժի հետ տաղանդ կամ ճաշակ կը գործածեն։ Սոցա Թոչակն ալ գոհացուցիչ է, և ոմանցն այնքան գոհացուցիչ մինչեւ անկախ արհեստաւորաց ոմանց նախանձելի լինիլ։

Օրինակի համար Պալապան, որ իւր նաւաձիգ երկու նաւակներն վաճառելու դժբաղդ հարկին տակ գանուեցաւ չորս տարի առաջ, այժմ կարի յաջող դիրք ունի իբր գլխաւոր մաքինիսթ Ընկերութեան մի մէջ ի Բանսիլվանիա։

Գրիգոր Զեօմլէքճեան, որոյ ձեռքերն անվարժ չեն նուագածութեան և ձեռնածութեան, մասնաւոր տաղանդ ցուցած է գծագրութեան մէջ և այժմ ելեքտրատիպ ընկերութեան մի գծագրիչն է ի Նիւ Եորք։ Նոյն ընկերութեան մէջ են նաև Եսայի Մաթիկեան, Գրիգոր Բարսեղեան և Շիշմանեան (այս վերջինն գծագրիչ ևս է), որք բաւական փափուկ մասեր կը կատարեն ելեքտրատիպ պատկերահանութեան մէջ։

Տաղանդաւոր երիտասարդ մ'ալ Լիննի մէջ ունիմք, Արմենակ Առաքելեան, որու համար կը լսեմք Թէ մեքենական դիւտեր ըրած է որոց մենաշնորհն ըստանալու ետեւէ է այժմ։

Ի Պոսթըն կայ Կարօ կամ Կարապետ, որ ճարտար ծրագրիչ և իւղաներկիչ է կարևոր ընկերութեան մի մէջ։ Նոյն քաղաքում է Իսրայէլ Պէշկեսթիւրեան, ձեւիչ (cutter) ի դերձակութեան, և Գրիգոր Յակոբեան, մուշտակագործ։

Փորագրիչներու բաւական մեծ Թիւ մ'ունիմք, որոց մէջ ոմանք առաջնակարգ գործաւորաց նախանձելի դասուն կը վերաբերին, ինչպէս Գրիգոր Գասպարեան, որ վերջին փափուկ հպումներն ընելու պաշտօնն ունի, և չէ անտեղեակ նկարչութեան ևս արուեստին, Թէեւ այս վերջինն իբրև արուեստասէր (amateur) կ'ընէ։ Յովհաննէս Հիւրմիւզ, Յովհաննէս Յակոբեան, Երուանդ Միւտավէրտի, ևս հասարակ գործաւորներ չեն, զի Նիւ Եորքի գործանոցաց մէջ ելեքտրատիպ պատկերագործութեան փափուկ մասերով կը զբաղին։

Միհրան Ալէքսանեան կահակագործութեան մէջ բաւական վարպետ գործաւոր մ'է ի Նիւ Եորք։

Հարիւրներով կը համրուին Թելի գործարանաց մէջ աշխատող Հայեր, որոց գործն ընդհանրապէս ուժ գործ է, ի բաց առեալ սակաւաթիւ ոմանց աշխատութիւնն որ բաւական ճարտարութիւն կը պահանջէ և լաւ

ալ կը վարձատրէ, ինչպէս Մինաս Սրօյեանի և այլ մի քանիներունն ի Վուստըր, և Ենովքեան եղբարցն՝ ի Ֆըլիվըլէնտ։

Ստեփան Բրուտեան Վուսթըրի մէջ ժամագործատան մի գլխաւոր գործաւորն է և իր վարպետութիւն շատ կը գնահատուի։ Նոյն քաղաքի թելի մեծ գործարանին մէջ երիտասարդ Բարակեան յարգեալ գրագիր մ'է տարիներէ ի վեր, իսկ հայրն, ծերունի Բարակեան, գործարանի մէկ շրջանակին մէջ փոխ վերատեսուչ է։

Ոստայնանկութիւնն ալ երբեմն հարիւրաւոր Հայերու գործն էր։ Այս ալ երկու ճիւղի կը բաժնուի, լայն գործ, որ բաղդատաբար դիւրին է, և նեղ գործ, որ է մետաքսեայ ժապաւէնի գործն, բաւական փափուկ։ Բազմաթիւ Տիգրանակերտցիներ և Խարբերդցիներ այս գործին մէջ յաջողութիւն վայելեցին մինչև երեք տարի յառաջ, բայց յետոյ մաքսային պայմանաց փոփոխութեամբ և այլ պարագայից բերմամբ գործն նուազեցաւ, և մեր ոստայնանկ հայրենակիցներէ շատեր մնացին երկար ատեն պարապ։ Ոմանք ուրիշ գործի ետևէ եղան։ Վերջերս նորէն այս գործն սկսած զարկ մի առած է կ'ըսուի, և յոյս կայ թէ դարձեալ մերայինք օգտուին։

Ի հարկէ ամեն ուր որ բազմաթիւ են Հայ գործաւորներ, ինչպէս ի Փրովիտէնս, ի Լինն, են, անոնց մէջէն տասնին կամ քսանին մէկն բարձր կարգի գործաւորութեան կը հասնի, մնացեալք թէ շատ կ'աշխատին և թէ քիչ կը վարձատրուին։ Այսպիսիք նաև երբեմն երբեմն առանց գործի կը մնան, և ինչ որ աներևակայելի խնայողութեամբ կրցած էին շահիլ, կուտեն կը սպառեն։ Բազումք խոնաւ, կամ սաստիկ տաք, կամ ապականեալ օդի մէջ կը գործեն, և կամաց կամաց կը տկարանան, կը դժգունին և զանազան հիւանդութեանց կը մատնուին։ Այսօր կը հասնի կամրայտ և առոյգ երիտասարդ մի Արևելքէն, և ահա մի քանի ամիս յետոյ նա ոչ ևս է կարմիր։ Մի անգամ Վուստրի մէջ ներկայ էի զգեստու վաճառականի մի խանութն, երբ հայրենակից մի իւր նորեկ եղբօր համար լաթ կը գնէր. նորեկն թիկնեայ և գէր էր, և դժուար կը հարմարէին նմա պատրաստ լաթեր. խանութպանն իմ մէկ դիտողութեանս պատասխանելով սա սխուր գուշակութիւնն ըրաւ նորեկին նկատմամբ. «Ան ալ կը պզտիկնայ մէկ երկու տարիէն։»

Շարունակելի

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«Հանդէս Ամսօրեայ»ն համառօտ կենսագրութիւններն հանդերձ պատկերներով տուած է հայազգի ութ երեսփոխանաց ի Հունգարիա, որք ուրիշ բարձր հանրային պաշտօններ ևս վարած են։ Այդ նշանաւոր Հայերու ոմանք դեռ կենդանի են և մեծ յաջողութեամբ կը շարունակեն իրենց հանրային ծառայութիւններ։

— Սալմաստէն կը գրեն «Մշակին» թէ Ուրմիայ Հայերն մեծ վիմաշէն եկեղեցի մի կառուցած են 1891 ին, և այժմ ալ մի վարժատուն կառուցանելու նպատակաւ հանգանակութիւն մի բացած են, որում մասնակցած է Տկն. Մ. Հայրապեթեան 100 թուման և Տկն. Բ. Պետրկօսեանց 100 թուման նուիրելով։

«Տէյլի Նիւզ»ին կը գրեն թէ Կարսի երկու պահապան զօրաց գնդերն որք գլխաւորապէս Հայերէ կը բաղկանային, յղուած են Բոլոնիա, և ուրիշ գնդեր բերուած են փոխանակ։ Այս կարգադրութեան պատճառուած կը համարուի հայախումբ գնդերուն համակրական կացքն հանդէպ իրենց տաճկահայ հայրենակցաց։

Շնորհակալութեամբ ընդունեցանք Փր. Մինաս Չերազի անգլիերէն ճառն կից ընդ Հայաստանի աշխարհացուցին, զոր խօսած է Աշխարհագրական Ընկերութեան անդամոց առջև Մայիս 6 1891ին։ Թայմզ և Աթէնիըմ կը ծանուցանեն թէ 1892 Մայիս 11ին ևս մեր հայրենանուէր գործիչն պիտի խօսի Ասիական Արքայական Ընկերութեան ժողովարահին մէջ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ապրիլ 16ի նստին մէջ Տիար Սարգիսեան խօսեցաւ «քաղաքավարութեան վերայ»։ Հետևեալ նութոց վերայ հետևեալ անդամք պիտի ատենախօսեն.—

Մայիս 7ին երկու ատենախօսներ պիտի լինին, Տիար Այվատեան պիտի խօսի «թղթակցութեան օրէնքներուն և քաղաքավարութեանը վերայ,» և Տիար Թաւշանճեան «խօսակցութեան քաղաքավարութեանը վերայ։»

Մայիս 21ին պիտի խօսի Տիար Տիննեան «Դրամ շահելու և հարստանալու ճամբուն վերայ։»

Յունիս 4ին Տիար Հիւրմիւզ պիտի խօսի «Ամերիկայի Սահմանադրութեան և ամերիկեան քաղաքացի լինելու պայմաններուն վերայ։»

Յունիս 18 ին Տր. Մարգար Տատրեան պիտի խօսի «բարեկամութեան վերայ։»

Յուլիս 2ին Տր. Արշակունի պիտի խօսի առողջաբանական նիւթի մի վերայ։

Օսմանեան կառավարութիւնն անյաջող գտնուեցաւ վերջապէս Անգղիան խաբելու վերջին փորձին մէջ։ Ապպաս Խտիվին հրովարտակն խմբագրուած էր այնպէս որ Եգիպտոսի սահմանն կ'եղանակաւորէր ի նպաստ Սուլթանի։ Կառավարութիւնն կը մտածէր թէ հրովարտակն միանգամ կարդացուելէն յետոյ ալ բանը բանէն անցած կը լինէր և Սինայի թերակղզին վերադարձած կը լինէր Սուլթանին։ Բայց Անգղիացիք կասկածեցան և պահանջեցին հրովարտակն կամ անոր ճիշդ օրինակն ընթերցուելէն առաջ. և տեսան ու առարկեցին։ Ապպաս փաշան ալ տէրութեանց ներկայացուց խնդիրն և խընդրեց նոցա միջնորդութիւնն։ Ամեն բան կարգադրուեցաւ Անգղիացւոց բաղձանաց համաձայն և Եգիպտոսի սահմաններն պահպանուեցան ըստ առաջնումն։ Դիտելու արժան կէտն այն է որ Բ. Դուռն հրովարտակի խմբագրութեան մէջ խաղ մի խաղաց, այնպիսի խաղ մի որ չէր կրնար Անգղիոյ աչքէն վրիպիլ, և չվրիպեցաւ։ Անպարկեշտ խաղ խաղացողներուն յաճախ կը պատահի դիմացինն չափազանց միամիտ համարիլ։

Լոնտոն հրատարակուող «Հայաստան թերթին հրատարակութիւն վեց ամսէ ի վեր դադարած է։

Լ'Առմէնի կը տեղեկանայ թէ մի քանի քաղաքաց մէջ Հայերն թոյլ տուած չեն որ Աշըգեան պատրիարքի կոնդակն ընդդէմ Լուսինեան սրբազանի կարդացուի։ Առաջնորդք ոմանք մինչև անգամ նամակ ուղղելով առ պատրիարքն բացատրութիւն խնդրած են այս տարօրինակ գրուածին նկատմամբ։

Փր. Չերազ կը պնդէ իւր թերթի մէջ թէ Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական ընտրութիւնն յաջողցունելու ապահով միջոցն է երկրորդ ընտրելին ընել Մուրատեան Սրբազանն փոխանակ Սեդրաքեան եպիսկոպոսի, վասն զի նոքա որ Սեդրաքեանն երկրորդ ընտրելի կ'ուզեն, յայտնի է թէ Խրիմեան Հայրիկի վերջնական ընտրութիւնն բոլորովին խնդրէ դուրս ձգած կը լինին։

HAGOPIAN

PHOTO-ENGRAVING CO.

3 Great Jones St. New York

Engraving for all purposes of

illustration in line & half-tone.

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։ —Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն— Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Թուրքիա դրամ ղրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ դիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ Կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և Եւրոպիոյ նշանաւոր քաղաքաց մէջ։ Ամերիկաբնակ Հայք որ դրամ ղրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի. Կիւլլապի Ս. Կիւլպէնկեան,

53 Cedar Sq. N.Y.

ՈՒԻԵՏԻՍ ՆԱՀԻԿԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ երկար տարիներու փորձառութեան շնորհիւ ամենէն ապահով և աժան գըներով փոխանակագիր տալ կարող է Խարբերդու և Պոլսոյ վրայ, և փարա կամ թիքէթ խրկել Մարսիլիա։

Ունի նաև ընծայի շատ յարմար Տաճկական Չինական, Հնդկական և Ճաբոնական ամեն տեսակ ապրանքներ։

Ծանօթութիւն.Գո. րծերնուս խաթրին համար ստիպուած չեմք մեր անունը կորսնցնել և օտար անուն մը կրել, մենք բուն Նահիկեան ենք։ Մեզ գրել հետեւեալ հասցէիւ

A. N. Nahikian, 39 Pleasant St. Worcester, Mass.

— «ՀԱՅՔ»ի 1891 տարին ամբողջ կազմուած կը ծախուի 2 թալէր 5 սէնթի։

Հետեւեալ գրքերն կրնան գնուիլ, գինն կանխիկ վճարելով, «ՀԱՅՔ»ի խմբագրատնէն, 202w. 23d St. New York

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ Գրեաց Մ. Սմբատ Գաբրիէլեան, 1888, (նախապէս հրատարակուած «Արեւելք»ի մէջ) 61 էջ. գինն է 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

Ի ՈՒԽՏՍ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, ի պէտս Ազգ. Վարժարանաց. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան, 1891՝ 128 էջ, գին մէկ թալէր կամ հինգ ֆրանք։ Եթէ վարժարանաց մէջ իբրեւ դասագիրք գործածելու համար ուզուին բազմաթիւ օրինակներ միանգամայն հարիւրին յիսուն զեղչ կը լինի։

P. SHALJIAN

9 SPRUCE ST. NEW YORK

ԳՐՔԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆՔ

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ԿԱԶՄ ԸՆՏԻՐ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՐԶԱՐԱՆ

(Չափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարզարան 128 երեսներէ բաղկացեալ և 36 ձևերով բացատրեալ, ինքնուսուցիչ գրքոյկ մ'է գինուորական մարզանաց և մարմնագիտական սկզբանց։

Գինն որեւէ հասցէի համար մէկ թալէր կամ հինգ ֆրանք։ Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարիւրին 25 զեղչ կը լինի։ Կրնայ ստացուիլ «ՀԱՅՔ»ի Խմբագրութենէն կամ ուղղակի հեղինակէն, հետեւեալ հասցէով,

G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

MARK F. COSGROVE

ԿՈՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ԲԼՊԼԸՐՆԵՐ

78 Front St., Corn Bigelow Court

WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուստըրի մէջ, ուր կրնաս գնել ամեն տեսակ կոշիկներ մոյկեր, և կոշիկի ըըպըըրներ։ Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՁԱՅՆ ՄԻ ԱՐԱՐԱՏ ԼԵՌՆԷՆ, անգլիերէն տետրակ մ'է 54 երեսներէ բաղկացեալ, որ կը պարունակէ հեղինակին - Տիար Միհրան Պաղտասարեանի - կենսագրութիւնն, Օսմանեան Պատմութեան վերայ ակնարկ մի և և Հայոց Պատմութեան բովանդակութիւն մի։ Տետրին վերջին երեսներն նուիրեալ են Հայոց պէտքերն և բաղձանքն ցուցնելու։

Այս տետր կը վաճառուի 50 սէնթի. դիմել հեղինակին հետեւեալ հասցէիւ — Mr. M. Baghdasarian, 411 Walnut St. Des Moines Iowa, U. S. A.

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ուև է արական հանդերձեղէնի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ աժան։

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ